ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2014 թվական N 61-Ա

ԱՐՄԻՆԵ ԾԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով, **ո ր ո շ ու մ եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 68-3.1-5/ Արմինե Ծատրյանին շնորհել իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2. Ա.Ծատրյանի հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանել 5 տոկոս հավելավճար:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. մայիսի 1-ից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014թ. ապրիլի 11
ք. Կապան